ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<< 13 >> նոյեմբերի 2014թ. N 219

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N25 ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի վեցերորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N1170-Ն որոշումը.

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի հունվարի 25-ի <<Գումար հատկացնելու մասին>> N25 որոշումը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
*Հայաստանի Հանրապետության 2014 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին տարրական ընդհանուր կրթության «Ներառական կրթություն » ծրագրի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով նախատեսված 39226000/երեսունինը միլիոն երկու հարյուր քսանվեց հազար /դրամ գումարը, հիմնական ընդհանուր կրթության «Ներառական կրթություն » ծրագրի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով նախատեսված 22724900/քսաներկու միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար ինը հարյուր/դրամ գումարից 22662800/քսաներկու միլիոն վեց հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր /դրամ գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության թվով 4/չորս/ հանրակրթական դպրոցներին աշակերտ թվերին համապատասխան վերաբաշխել համաձայն հավելվածի:*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ՄԱՐԶՊԵՏ՝*** ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2014 թվականի նոյեմբերի 13 -ի
N 219 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2014Թ
ՃՇՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ

| h/h | Դպրոցի անվանումը | /հազար դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | 09 01 02 04 | 09 02 01 05 | Ընդամենը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Արմավիրի թիվ 5 հիմն.դպր. | 13281.0 | 9460.8 | **22741.8** |
| 2 | Արմավիրի թիվ 6 հիմն.դպր. | 6300.5 | 4271.8 | **10572.2** |
| 3 | Վաղարշապատի թիվ 7 հ/դ | 12200.0 | 5367.6 | **17567.6** |
| 4 | Վաղարշապատի թիվ 9 հ/դ | 7444.5 | 3562.6 | **11007.2** |
| | ընդամենը | **39226.0** | **22662.8** | **61888.8** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ